

Հ. ԱՐԱՄՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՃՈՒՆ ՎԵՐԵԼՔԸ

Սովետական Հայաստանում և Սովետական երկրում ժողովուրդն ամեն օր, ամեն րոպե զգում է իր հարազատ պետության հայրական հոգատարությունը, ժողովրդի նյութական բարեկեցությունը, կրթական և կուլտուրական բոլոր պահանջները՝ պետության մշտարթում ուշադրության և հոգածության առարկա են: Եվ սրանով է բացատրը շարունակական և վառ օպտիմիզմը, որ բնորոշում է սովետական մարդկանց՝ իրենց հարազատ պետության ձեռնարկում:

1947 թվականի աշնանը, երբ Հայրենիք հասանք, դեռևս շարունակվում էր պատերազմի տարիներին հաստատված պարենավորման քարտային դրությունը, և կյանքը գգալիորեն թանձ էր: Բայց հայրենական ժողովուրդը վառ լավատեսությամբ սպասում էր տնտեսական դրության բարելավմանը. բուլորը, համոզումով և հավատքով, կրկնում էին, որ քարտային դրությունը շուտով կվերացվի, կյանքը՝ կաժանանա և պարենային ու արդյունաբերական ապրանքների գները կհավասարվեն նախապատերազմյան գներին: Այդ խոստացել էին կառավարության ղեկավար մարդիկ և ինքը՝ Առաջնորդը:

Սովետական Հայաստանում և Սովետական երկրում, առհասարակ, հավատի շափութեղի է այն համոզումը, և համոզումի շափութեղի է այն հավատը, որ կառավարության ղեկավար մարդիկ զուր խոստում չեն տա, և եթե մի խոսք ասեն, ապա ուրեմն գործը անվրեպ պիտի հետեւ խոստմանը:

Եվ, իրոք, երկար շապասեցինք՝ տեսնելու այդ խոստման հոյակապ կենսագործումը:

Հայրենի երկիր մեր հասնելուց ընդամենը երկու և կես ամիս հետո, 1947 թվի դեկտեմբերի 14ին, ողջ Սովետական երկրով մեկ ուղիղության ու թերթերը ազդարարեցին, թիւ սկսյալ հաջորդ օրվանից, դեկտեմբերի 15-ից, վերացվում է պարենային և արդյունաբերական ապրանքների քարտային սիստեմը և ապրանքների գները իշեցվում են զգալի սոկոսներով:

Համատարած ցնծություն էր բովանդակ երկրում, և իրավամբ:

Ժողովրդի նյութական բարեկեցությունը զգալի աճ էր ունենում, պատերազմի վախ-

ճանից հագիր երկու տարի անցած, այնպիսի պատերազմի, որի մեծագույն ծանրությունը ընկել էր սովետական հերոս ժողովրդի ուսերին:

Ամենանշագրիտ տվյալներով, գների այդ առաջին իշեցումից, ժողովուրդը մեկ տարվա ընթացքում ապահովեց 86 միլիարդ ռուբլու շահույթ:

Ամեն ոք զգում էր, թե սա դեռ իշեցման առաջին փուն է, և թե չեն ուշանա գների իշեցման հետագա նոր փուկերը:

Եվ մարդիկ չէին սխալվում:

1949 թվականի մարտի 1-ին, ընդունվեց և կենսագործվեց պետական նոր որոշում՝ պարենային և արդյունաբերական ապրանքների պետական մանրածախ գների նոր իշեցման մասին: Գները իշնում էին այնպիսի մակարդակի, որ ժողովուրդը մեկ տարում ապահովված էր 71 միլիարդ ռուբլու լրացուցիչ շահույթ, և նույն համեմատություններով բարձրանալ էր նրա նյութական բարեկեցության մակարդակը: Ծնորհակալության նոր հորձանքներ բարձրանալ էին ժողովրդից գեպի հարազատ պետությունը, որ այնքան հայրորեն հոգատար էր դեպի ժողովրդի:

— Ուրա՞ի եք, բարեկամնե՞ր, — հարց էին տալիս հայրենածին հայրենակիցների իրենց հայրենադարձ հարազատներին, և, առանց պատասխանի սպասելու, որովհետև ակներև էր պատասխանը, շարունակում էին. — Սա էլ դեռ վերջակետ չէ. սա մի նոր փուկ է միայն. շուտով կլինի գների երրորդ իշեցումը...

Իսկ վաղոցվա քաղաքացիների շափի լավատես դարձած նոր քաղաքացիները նույնքան հավատքով և համոզմակը սպասում էին երրորդ իշեցմանը:

Ահա 1950 թվականի մարտի 1-ից տեղի ունեցավ գների նոր իշեցում, շատ ավելի կարևոր տոկոսներով!)

1) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տոկոսը բառը արևելահայերենի և արևմտահայերենի մեջ տարբեր իմաստ ունի, Սփյուռքի մեր հայրենակիցներին ևս ավելի հասկանալի լինելու համար ասենք, թե տոկոս մեզ մոտ նշանակում է առ հարյուր. երբ ասում ենք, թե ավագ ապրանքի գինը իշել է 50 տոկոսով, պիտի հասկանաւ, որ, օրինակ, 10 ռուբլի արժող ապրանքը այժմ արժե 5 ռուբլի: — Խմբ:

երկու փուլերում։ Փետրվարի 28-ի երեկոյան, բոլոր քաղաքացիները իրենց տներում կամ հասարակական վայրերում և հրապարակներում, ուղղությունինիների մոտ էին փուլացել, նախագալուվ, որ կը սեն ցնծալի լուր։ Նախ, 1949 թվի մարտի 1-ը խոստմնալից էր դարձնում 1950 թվի մարտի 1-ը, և, երկրորդ, ցերեկվանից, պետական մեծ ու փոքր մթերային խանութիներում ակնհայտ էր ինչ որ խոստմնալից շարժում, խանութիները ստանում էին ամեն տեսակի ապրանքներ, նոր մթերքներ։ Այդ օրը, որոշ մեկ ժամից սկսյալ, ոչինչ չէին վճառում։ Պոները փակ էին, իսկ ներսում, ապակե-փեղկերից տեսանելի էր ծառայողների եռուղերը... Անպանքների վրա նշանակված գները փոփոխում են, — ասում էին մարդիկ միմյանց։ — ուղիղուն, երկի, այս երեկո ևեթե հաղորդի մի լավ լուր...»։

Արդարեւ, երեկոյան ուղիղուն, իսկ հաջորդ առավոտյան թերթերը տվեցին պետական նոր որոշումը՝ գների նոր իշեցման մասին։

Եվ այդ որոշումը ամենալավատես ակըն-կալություններից ավելի լավ դուրս եկամ։

Պարենային և արդյունաբերական համար-յա բոլոր տեսակի ապրանքների գները, պե-տական որոշումով, իշել էին չափանիւմ տո-կուներով, բաղդադամամբ դեռ մի օր առաջ ընթացիկ գներին։

Հրատարակելի էր ամեն ապրանք ընդ-դրրկող ցուցակ և նշանակված էր, թե յուրաքանչյուրի գները ի՞նչ տոկոսով իշեց-վում է։

Նշանակելի, և գնող մասաւայի համար ա-պավել ուրախալի է այն, որ մինչ բոլոր տե-սակի ապրանքների գները իշեցվել են, մի-շին հաջուկ, շուրջ 21 տոկոսով, առաջին անհրաժեշտության, մասսայական ամենա-լայն սպառում ունեցող ապրանքների գների իշեցման համեմատությունները առավել խո-ցոր են։ Որո՞նք են այդ ապրանքները, ի՞նչ ար-կե՛ հացը, միսը, կենդանական յուղը, օճա-ռը և այլն։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ տոկոսներով են իշեցվել այդ ապրանքների գները։ Հացի և ալյուրի գները իշեցվել են 25—30 տոկոսով, մսերի գները՝ 24—35 տոկոսով, յուղերի գները՝ 30—35 տոկոսով, աղի և օճառի գները՝ մինչև 50 տոկոսով։

Տարակույս չկա, որ այս որոշմամբ լսյն շափերով բարեկավում է ժողովրդական մասսաների նյութական բարեկեցությունը և քարձրանում է նրանց կենսամակարարակը։

Բայց ավելի կոնկրետ նայելով գների ի-շեցմանը, ի՞նչ է ստացվում։

Անզմ, բայց շատ արտահայտիլ տողերով այս հարցին պատասխանում է գների իշեց-

ման մասին չրապարակված պետական որո-շումը։

«...Գների իշեցումից բնակչության ընդհանուր շահումը կկազմի առնվազն 110 միլիարդ ռուբլի։

Տարակույս չկա, որ գների նոր իշեց-ման հետևանքով,

1. նորից գգալիորեն կրարձրանա ռուբլու գնողական ուժը։

2. սովետական ռուբլու կուրսն է՛լ ս-վելի կրարելավի օտարերկրյա վալյու-տաների կուրսի համեմատությամբ։

3. տեղի կոնքնա բանվորների և ծա-ռայողների ռեալ աշխատավարձի հե-տագա լուրջ բարձրացում։

4. լրջորեն կրարելավի կենսաթոշա-կառուների և թոշակառուների դրությու-նը, քանի որ գների իշեցումով անփո-փոխի են մնում կենսաթոշակների և թո-շակների շափերը։

5. տեղի կոնքնա գյուղացիների եկա-մուսների հետագա լուրջ բարձրացում՝ կֆանացած արդյունաբերական ապ-րանքների գնման համար գյուղացիա-կան ծախսների գգալի կրճատման հե-տևանքով և այն բանի շնորհիվ, որ ան-փոփոխ են մնում հողագործության և անասնաբուծության մթերքների մթեր-բան պետական գները։

Ժողովրդի ընդհանրությունից անցնելով անհատ տնտեսություններին, տեսնենք, թե նոր որոշումը ի՞նչ անդրադարձում է ունե-նում նրանց կանոնքում։ Վերցնենք մի տնտե-սություն, որի ամսական եկամուսն է, ա-սենք, 1000 ռուբլի։ Միշին հաշվով, բոլոր ապրանքների գներն իշած գինելով շուրջ 21 տոկոսով, այնպես է ստացվում, որ այդ տնտեսության ամսական եկամուսը բարձ-րացած է լինում 1210 ռուբլու, շնորհիվ ա'յն բանի, որ բարձրանում է ռուբլու գնողունա-կությունը։ Իսկ եթե այդ տնտեսությունը այնպիսին է, որ կարող է, կամ ցանկանում է հրաժարվել ոչ անմիջական անհրաժեշ-տություն ներկայացնող ապրանքներից, ինչ-պիսիք են, օրինակ, օդեկոլոնը, դաշնամու-րը, որսորդական հրացանը և նման իրեր և բարարարվել առաջին, ամենօրյա անհրաժեշ-տություն ներկայացնող ապրանքներով, ա-պա ուրեմն կստացվի այնպես, որ իր եկա-մուսը ամսական բարձրացած է 300-ից 400 ռուբլով։

Պետական հայրական հոգատարության այս ջերմ արտահայտությունը, հասկանալի է, որ ժողովրդի կողմից պիտի դիմավորվեր ցնծության համատարած արտահայտություններով և հարազարդակալության համատարած ար-

տահայտություններով, Ամենուրեք, մայրաքաղաքներից մինչև ծայրամասային ավանները, բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան գումարեցին բազմամարդ ժողովներ և իրենց վառ շնորհակալությունը հայտնեցին հայրախնամ պետությանը:

Բայց սովորական մարդիկ շրավարարվեցին միայն շնորհակալության խոսքերով և ճառերով: Նրանք խոստացան բարձրացնել աշխատանքի արտագրողականությունը, իշեցնել ապրանքների ինքնարժեքը: Սովորական ժողովրդի և Սովորական Պետության միջև շահերի խզում չկա և չի կարող լինել: Եվ այդ հասկանալի է. չէ՞ որ Սովորական Պետությունը սովորական ժողովրդի կողմից ընտրված և նրա կամքը արտահայտող հատակատ նրկայացուցչությունն է:

Իների իշեցման առաջին օրը հիշատակելի կմնա շատերի համար: Ժողովուրդը լցված էր պողոտաները, հրապարակները, խանութները: Մեծ էր եռուգեղոր հատկապես խանութներում, որտեղ ապրանքների անմիջական կարիք շունեցողները մինչև իսկ կատարում էին գնումներ, ասես նոր, ցածր գներով ապրանքների համը նայելու համար: Շատերի ձեռքերում և շովայի պայուսակներում նկատելի էին գինու և այլ խմիչքների շիշերը: Ասես, բոլորը խոսք մեկ էին արել. որ երեկոյան իրենց տներում նշանավորեն այդ օրը:

Ինքս էլ չկարողացա զերծ մնալ ընդհանուր տրամադրությունից և վերադարձա տուն՝ բեռնավորված մեր Արարատ տրեստի Շարուդագույն»ի շիշերով... Դիշերը, ընտա-

նիքս և մերձավոր ազգականներս, հավաքվել կինք հայրենական բարիքներով լիքը սեղանի շուրջը, բերկրալից և երջանիկ:

— Դե՞, մի լավ երգ, — դիմեցի Պետական օպերայի մեներգչուհի քենուա՝ Արմինե Թութունյանին, — բայց այսօր թո'ղ օպերային արիաները, և երգի՛ր ցնծության, դինու, խրախնանքի մի երգ, ժողովովի սրտից ժայթքած մի լավ երգ:

— Սիրո՞վ, — պատասխանեց նա, — լըրե՞ք բաժակները:

Բաժակները հորդում էին ովարդագույնառվ, իսկ մեր սրտերը՝ ցնծությամբ: Արմինեն երգեց մի երգ, որ այդ ոռպերին ավելի էր համապատասխանում մեր հոգեկան վիճակին.

...Ծողա՛, հայրենի՛ք, շողա՛ հարազատ, ի՞նչ լավ է ապրել երկրում քո ազատ... և մենք կենացը մեր հայրենիքի...:

Վեց տարեկան երեխաս հանկարծ բաց արեց ուստիո-հաղորդիչը: Պետական ուսդիոկայանից, զարմանալի զուգադիպությամբ, հնչում էր նույն երգը, Օֆելիա Համբարձումյանի կատարմանը...:

Ինձ թվաց, թե ողջ եթերը այդ գիշեր թրթում է նույն երգով և բոլորի սրտերում ծփում է հարազատ հայրենիքում, հարազատ պետության հայրական հովանու տակ ապրելու երջանկությունը:

Ծողա՛, հայրենի՛ք, շողա՛ հար ազատ, ի՞նչ լավ է ապրել երկրում քո ազատ...:

